6. ԹԱՓԱԳՅՈՋԻ ՀԵՔԻԱԹԸ

Կէղնի չէղնի մե ռանչպարմ կէղնի մե գեղիմ մեջ։

Էդ ռանչպարը հեչ բան չի ունենա, մե տղեմ կունենա։

Էդ տղեն տասնըհինգ տարեկան կէղնի, անունն էլ Սամսոն կէղնի։

Օրվանմ մեկը էրազի մեջը էդ Սամսոնը մե աղջիկմ կը տեսնի, աստու հրամանով բութա կուտա։ Էդ աղջիկն էլ թագավորի աղջիկ կէղնի։ Դու մի ըսե էդ գիշերը էդ աղջիկն էլ էդ տղին կը տեսնի էրազը, բութա գըյնին հ'իրար հետ։

Էհ, մենք աղջիկը թողնենք իրա տեղը, գանք տղի քովը։

Բիրտան տղեն քնեն կը զարթնի, հ'աչքերը կը բանա, տեսնի կ'օր ո՛չ աղջիկ կա, ո՛չ էլ բան։ Տղի քունը էլ չի տանի, էդ գիշերը էդոր համար մե տարիմ կէղնի։ Առավոտը բարի լուսը կը բացվի, բացվի բիտտունիդ վրա (օղորմի հորդ)[1] տղեն գելնի, էլ քուն ու դադար չի ունենա, մե գլոխ էդ աղջկա համար կը մտածե ու գուլա։

Էդպես մե ամիսմ կանցնի, վա՜յ էն անցնելուն։

Օրվանմ մեկը բիրտան մե մըրափմ[2] կը թափի տղի վրա, տղի հ'ուշքը կանցընի, գըյնի կը քնի։ Մեկ էլ կը զարթնի, կը տեսնի օր ինքը քրտնած է։ Ինքն իրան կըսե. «Աստված ընձի ղվաթ տվեց, ես էղա փահլըվան, հիմի կէրթամ, մուրազիս կը հասնիմ»։

---

[1] Ասացողի ընդմիջարկություն է (Ս. Կ.)։

[2] Թմրություն (Ս. Բ.)։

Տղեն գուզե օր փորձե, թե օղո՞րթ է իրան փահլըվընութենը. կէրթա գեղի քյանարը, կը տեսնի օր էդ գեղի հոտղընեբը գոմեշ կը կըռվեցընեն։ Կէրթա մե ձեռքով մե գոմշի կոտոշեն կը բռնե, մե ձեռքով էլ՝ մե, թափ կուտա, անմենքին մե կողմը կը թապլե։ Էդ հոտղներն օր էդ կը տեսնին, վախենալներուն բիտտուն կը թողնին կը փախնին։ Էդտեղ տղեն կը հասկնա, օր աստված իրեն ղվաթ է տվե։

Կէրթա եռաուն լըտրանոց (մե լիարը 20 ֆունտ)[1] թուրմ շինել կուտա, կապե կը վրեն ու գըյնի ճամփա։ Շատ կէրթա, քիչ կէրթա, շատն ու քիչը աստված գիտե, էրթըցած տեղը մե մարդմ ռաստ գուքա։ Դու մի ըսե, էդ մարդը հրեշտակ է էղե, աստված է ղրկե։ Հըմը տղեն չիտե, գիտե, թե ճամփորդ է։ Էդ հրեշտակը էդ տղին կըսե.

— Հ՚ո՞ւր կէրթաս, ախպեր ջան։

Էս տղեն էլ առանց քաջվելու կըսե.— Ախպեր, քեզնից պահեմ աստծուց ի՞նչ պահեմ, Անատոլու երկիրը, ֆիլան չոլի մեջ մե բութեմ ունիմ, կէրթամ օր գտնիմ, բերեմ։

— Շատ լավ,— կըսե,— դու յայան էրթըլով տասը տարի օր էրթաս, էդտեղ չես կրնա հասնի։ Ես քեզի խրատ կուտամ։ Էդտեղ, դեմը, ծառիմ տակ հավուզըմ կա, կառնիս մե ձիում գյամ, կէրթաս ծառի տակը պահ կը մտնիս. ծովի մեջը հրեղեն ձի կա, էդտեղ գուքա ջուր կը խմե՝ կէրթա։ Ջուր խմած տեղը կըրնաս գյամը ղարկ բերանն ու հեծի։

Տղեն կըսե.— Շատ լավ։

Շնորհակալ կէղնի ու կէրթա։ Կէրթա կը տեսնի օր էդ մարդու խրատ տվածի պես մե ծառմ կա, տակը լավ հավուզմ։ Կէրթա մե դյամըմ կառնի, գուքա էդտեղ պահ կը մտնի։ Մեկ էլ կը տեսնի օր, ի՞նչ տեսնի, ծովը պատռավ, մե ձիմ դուս հ՚ելավ միջեն, թռնելով էկավ էդ հավուզի քովը կայնավ, ըսկսեց ջուր խմել։ Մեկ էլ տղեն թռավ, գյամը ղարկեց բերանն ու հեծավ։

Ձին ըսավ.— Տղա, հ՚իջի, թե չէ, կը հանեմ երկինք, կը քցեմ գետին, հազար կտոր կէգնիս։

Տղեն կըսե.— Գելլես հ՚երկինք, գիջնիմ փորիդ տակը։

Ձին կըսե.— Կը ղարկեմ գետին՝ օխտը ղաթը գիջնիս։

Տղեն կըսե.— Գելլեմ մեջքիդ։

Ձին կը տեսնի օր էհ, էս տղեն իգիթ տղա է, ինքն իրան կըսե. «Էսորեն լավ տեր չեմ կրնա ճարե»։

---

[1] Ասացողի բացատրությունն է (Ս. Կ.)։

— Օր,— կրսե,— էդպես է, Սամսոն, ուզե մուրազդ տամ։

Տղեն կըսե.— Իմ մուրազս էն է, օր հ'ուր օր կէրթամ թեզմ հասցնես։

Էհ, հրեղեն ձի, հ'ելավ հ'երկինք, թոնելով դնաց։ Գնաց, գնաց, մեկ էլ տեսան օր, ի՞նչ տեսնին, ճամփու վրեն էրկու սար կէրթան դուքան հ'իրար շըխկ կը դիպնին։

Էդտեղ քիչմ կայնին կը, ձին կըսե.

— Ա՛յ տղա, էնպես ընձի ուզանգյուով կը զարկես՝ օր մորես կերած կաթը բերանս գա, օր ես լավ թռնիմ, էս սարեն անցնինք։

Տղեն կրսե.— Շատ լավ։

Սարն օր հ'ետ կէրթա, տղեն ուզանդին զարկելուն պես ձին էնպես կը թռնի, օր մեննակ պոչի մաղերը կը մնան սարերի արանքը, կը կարին։

Սարեն օր կանցնին, քշեն էլի կէրթան։

Շատ կէրթան, քիչ կէրթան, մեկ էլ մե բախչիմ ռաստ դուքան։ Տղեն բերե ձին էդտեղ կ'օրըկե, ինքն էլ նստի հաց կուտե։ Դու միսե էդիկ դևերու թագավորի բախչեն է։ Էդ բախչի դռռուխճին գուքա։

— Ա՛յ մարդ,— կըսե,— դու չէ՞ս հ'իմացե էս տեղի դևերի անունը, էսոնց սինոռի քովեն մարդ չի կրնա անցնի, դու էկեր ես բախչի մեջը ձիդ օրըկել ես, ե՛լ գնա, թե չէ հիմի օր հ'իմացան, դուքան սաղ թիքադ հ'անկաջդ կը թողնին։

Տղեն կրսե.— Գնա՛ քու դևերուդ ղրկե քովս։

Էդ դռռուխճին կրսե.— Տղա՛, խելա՞ռ ես, ե՛լ քաշվի գնա, թե չէ դյաղանակը հիմի գլխուդ գուքա։

Էդ տղեն գելնի էնպես մե սիլլեմ[1] կը քաշե էդ դռռուխճուն, օր կյանքի մեջը էդպես բանի ռաստ չէր էկե։

Դռռուխճին գելնի կէրթա դևի թագավորին գանգատ կէնե, թե էսպես, էսպես. «Մե մարդմ էկեր է խաս բախչեն, ես ուզեցի խաթրով ճամփու դնել, ձեզի քրֆեց, ընձի էլ լավմ ծեծեց»։

Դևերու թագավորը էդ խոսքերը լսելուն պես՝ կրակ կտրավ, կանչեց իրա դոշունը, ինքն էլ ընկավ հ'առաջ, հ'ելավ գնաց էդ տղի վրա կռիվ։

Տղեն հացը կերեր, պրծեր էր, էն էր սարքըվիր կը օր էրթար՝ մեկ էլ տեսավ օր մե դոշունմ գուքա օր, աստղին համբանք կա՝ էգոնց չկա։

Ախպեր էդ տղեն տղեմ չէր, բուռմ կրակ էր, հ'ելավ հեծավ ձին,

---

[1] Ապտակ (Ս. Բ.)։

քաշեց եռսուն լտրանոց թուրը, ընկավ էդ ղոշունի մեջը, մե կողմեն ինքը շարդեց, մե կողմեն ձին, էս գլխեն մտավ, էն գլխեն հ'ելավ։ Հ'ետև գնաց էդ գևերու թագավորի քյոշկը, գևերուն էլ սրպանեց, էկավ ընկավ ճամփա, գնաց։

Գնաց, գնաց, շատն ու քիչը աստված գիտե, գնաց հասավ մե մաղարիմ, տեսավ օր էդ մաղարի գուռը մե ղոճա սալմ է դրած, օր հարուր հոգի թափի՝ չի կրնա տեղեն ժաժ տա։

Էդ մաղարան օր տեսավ, գիտես թե աշխարք իրեն տվին։

Ձիեն հ'իշավ, թուրը ղրաղ դրեց, վրա հասավ էդ սալին, վերուց մե ղրաղ քցեց, մտավ նես։ Մտավ նես, տեսավ օր մե լսի կտոր աղջիկմ խալում վրա նստած է։

Աղջկան տեսնելուն պես.— է՞,— կըսե,— փնտրածս գտա,—ու խելքը կանցնի։

Աղջիկն էլ օր տղին կը տեսնի, կը հասկնա օր իրան բութեն է, վրա կը հասնի, շուր կը բերե, կը ցանե հ'երեսին, հ'ուշքի կը բերե։ Քանի տարվա բութա, էրված խորոված սրտեր, փաթթըվեր են հ'իրար, պոկ չեն գա։ Հ'իրիկուն օր կէղնի աղջիկը տղին կըսե.

— Սամսոն ջան, մե թափա-գյոզմ ընձի փախցուցեր բերեր է էստեղ, հերս տասէրկու թագավորով էդոր հետ կռվավ, չկրցավ հաղթե, վերշը ընձի փախցուց բերեց։ Գնացել է որսի, հիմի հ'ո՞ւր է, հ'ուր չէ, գուքա, արի քեզի պահեմ, օր չգա քեզի ուտե։

Տղեն կըսե.— էդ ի՞նչը թափա-գյոզ է, օր տասէրկու թագավոր չեն կըրցե հաղթե։

Աղջիկը կըսե.— Սամսոն ջան, էդ թափա-գյոզը հ'երկըթե մարդ, քարե հոքի է, մե մենձ հ'աչքմ ճակտի օրթեն ունի, թե օր էդ հ'աչքեն զարկին, էն է օր կը մեռնի, թե չէ հեչ սուր չի բանի վրեն։

Տղեն կըսե.— Աղջի, դու ի՞նչ գիտես։

Աղջիկը կըսե.— Օղորթ է, չիտեի, հըմը մե օրմ մեր մեջը առարկու էղավ, ես ուզեցի հ'իմանալ, թե էդոր ի՛նչը կը վնասե, ինքը ընձի ըսավ, թե «հ'աչքիս մեջը մե կարմըրցրած շիշմ կոխեցին, դաթի կը վնասե, թե չէ ընձի հեշ բան քյար չի էնեե»։ Ես դուղեի օր էնեի մե օրմ, քնած տեղը, հըմը վախենալի կը, համ էլ օր անվերի տեղ, ճամփա չիտեի, ճար չիտեի հ'ո՞ւր էրթալի։

Էդ աղջկա անունը Գյուլինազ կէղնի։

Տղեն կըսե.— Հըպը ինչը էնենք, օր էդ թափա-գյոզին քնցընենք։

Աղջիկը կըսե.— Արի ձիդ քաշենք նես, քեզի էլ տանիմ մե գող-

տուց տեղմ պահեմ, էն սալն էլ օր դռնեն ղրաղ ես դրե, էն էլ բե, իրան տեղը ղի, օր Թափա-գյոզը բան չկըռահե։

Տղեն կէրթա ձին նես կը քաշե, ախոռի մե քոշեմ մուԹը տեղ կը կապե, մաղարի սալն էլ կը վերցնե դնե դռան դեմը, ինքն էլ Թուրը կառնե կէրթա, կը մտնի դառապի տակը։

ՄուԹն օր դրնկնի, մեկ էլ մե գղըրտոցմ դուքա, սար ձոր կը զընդզընգա, աղչիկը կը տեսնի օր Թափա-գյոգն էկավ՝ չորս գոմեշ, տասը օշխար, մե քանիմ հատ էլ կով ու եզ հ՚առաշը խառներ գուքա։ Մե դոնա ծառմ էլ քոքով պոկեր է, իրան էրեր դյագինակ։

Գուքա, մաղարի սալը կը վերցնե, էն կողմը կը դնե, էդ բերածները նես կէնե հ՚ախոռը, բերե իրեք հատ օշխար մորԹե կը, բաշե մորԹին վրաներեն Թապլե կը էնԹին. օճախ կէնե, բերե կը ամմեն մե օշխարը մե շըշիմ կը զարկե, կը խորվե, իրեք բրդուճ կէնե, մեկ-մեկ կուլ կուտա։ Քիչմ կը նստի, էս կողմը կաշե, էն կողմը կաշե, դառնա աղչկանը կըսե.— Աղչի, իսան օղլու հոտ գուքա։

Աղչիկը կըսե.— Ի՞նչ կըսես,— կըսե,— քու ահուդ իստեղ վո՞վ պիտի դա, ես իսան եմ, իմ հոտս է։

Թափա-գյոդը կը հավատա աղչկան, գելնի մե մենձ բոչկեմ ջուր կը իմե, բերե նորից մե գոմեշմ էլ կը խորովե, էրկու Թիքա կէնե, կուլ կուտա ու դրնկնի կը քնի։

Թափա-գյոդն օր կը քնի, աղչիկը գելնի կրակը լավ կը գյուռցընե, ըներե շիշը կոխե կը մեջը, օր կարմրի։ Շիշը կը կոխե կրակի մեջը, կէրթա տղին կառնե գուքա։ Տղեն օր Թափա-գյոզին չի տեսնի, ինքն իրան կը զարմանա, կըսե. «Պա՞հ, պա՞հ, պա՞հ, Թափա-գյոզ քի Թափա-գյոդ, մեննակ գլոխը դուքա հիԹսուն փուԹ, քիԹը տասնըհինգ փուԹ, հ՚ամմեն մե հ՚առկեն չորս հինգ փուԹ»։

Տղեն կը տեսնի օր շիշը կարմրավ, վերցնե կ՚ու Թափա-գյոզի աչրը կը խրե։ Աչրը խրելուն պես Թափա-գյոզը էնպես կը ճվա օր՝ մաղարեն կը Թընդա։ Քիչմ չապալամիշ կէղնի ու կը վերջանա։

Տղեն, ղվաԹով տղա, վերցնե կը Թափա-գյոզին տանի կը Թապլե ձորը, գուքա մե հինգ վեց օր էդտեղ աղչկա հետ քեֆ ուրախուԹյուն կը քաշեն։ Վերջը տղեն կըսե.

— Գյուլինազ ջան, ել էրԹանք, էս վերանա տեղը մեզի ձեռ չի տա։

Գելլին, ձին դուս կը քաշեն, կը հեծնի, աղչկան էլ կառնե Թարը, կէրԹան։ ԿէրԹան, կէրԹան մե Թագավորիմ քաղքի կը մոտենան։

ԿէրԹա էդ տղան Թագավորի Խաս բախչի դուռը, քաշե կը Թուրը

Խաս բախչի դուռը կը ջարդէ, նեռ կը մտնի, ձին կ'օրրկէ էդտեղ, ինքն էլ յափունջին կը փռէ, ալպինիլը քաշէ կը գլխներուն ու կը նստին հաց կուտեն։ Մեկ էլ բախչի ղարաուլը գուքա կը կը տեսնի օր, դուռը ջարդած, մե մարդմ նեռ է մտե, ձին օրուկե, նստե կնկա հետ հաց կուտե։

Ղարաուլը գուքա իսոնց քովը, կըսե.— Ա՛յ մարդ, դու ո՞վ ես՝ օր թագավորի բախչեն ես մտե։

Տղեն կըսե.— Քու ու քու թագավորի հ՚աչքը հանողն եմ։

Ղարաուլը կը մնա մոլըրած, կէրթա, թագավորին՝ տղի ըսածները խապար կուտա։

Թագավորը կը կանչե Լալին, կըսե.— Չէղնի՞ էգ տղեն անոթի է, գազըզեր է, քիչմ հաց տարեք, թող ուտե հեռանա։

Լալեն գելնի, հաց կառնե, կէրթա տղի քովը։

— Ահա՛ն,— կըսե,— թագավորը քեզի հաց ղրկեց, օր ուտես, հեռանաս։

— Չէ՛,— կըսե,— ես հացի կարոտ չեմ։

Բերե մե թղթիմ վրա տասնըհինգ հատ օսկով բարձած գավա կը քաշե, կուտա Լալին, թե տար թագավորիդ տուր։

Լալեն տանի կուտա թագավորին. թագավորը կը հասկընա օր տասնըհինգ բեռ օսկի գուղե, օր հեռանա։

Ինքն էլ էրկու հատ հավկիթ կը քաշե, կուտա Լալին կը ղրկե, կըսե.

— Տար, ըսա թե՝ գուքամ էրկու հ՚աչքդ էլ հավկըթի պես կը ձերմըկցընեմ։

Լալեն բերե կուտա տղին. տղեն էն սըհաթ կը հասկընա, վերցնե էրկու կակալ[1] կը քաշե, յանի թե. «Կակալներս (պլոր) կուտեսՁ, կը ղրկե թագավորին։

Թագավորը բուռմ ցորեն կը քաշե, կը ղրկե էգ տղին, յանի թե. «Ինքան ղոշուն կը հանեմ, քեզի կը ջարդեմՁ։

Տղեն էլ մե հավմ կը քաշե, ղրկե, թե. «Էդքան ղոշունդ իմ մե հավս կուտեՁ, յանի թե. «Էդքան ղոշունդ իմ մե մարդը կը ջարդեՁ։

Թագավորը տեսնի կօր իլլաճ չկա, գելնի ղոշունը կառնե, գուքա էդ տղի հետ կռվելու։

Տղեն կը տեսնի օր ղոշունն էկավ, գելնի կը հեծնի ձին, կը կապե եռսուն լիտրանոց թուրը, գընկնի էդ ղոշունի մեջը, էս գլխեն կը մտնի, էն գլխեն գելնե։ Արունը սելավի պես գելնե կէրթա։

---

[1] Ընկույզ (Ծ. Բ.)։

Ախպեր, էդ թաղավորի իլլաճը կը կտրի, քանի ղոշուն կը հանե, էդ տղեն կը ջարդե։

Թագավորը իրեք հատ ղե կունենա։ Բերե էդ դեները կը ղրկե տղի դեմը։

Տղեն գելնի էդ դեերու դլոխներն էլ կը կտրե։

Թաղավորը մոլորի, մնա կը։ Կանչե կը իրան սինոտի մարդոցը, օր խորուրդ էնե, թե ինչ էնեն, օր էդ տղի ձեռքեն աղատվին։

Մեկը վերցնե կրսե կը թե.— Թագավորն ապրած կենա, կանչենք մե դրրացը տերտերմ՝ դրին աջել տանք, տեսնինք ի՞նչ կըսե։

Կանչեն կը մե գրրացիմ. դրրրացը կաջե գրին, կըսե.

— Թաղավորն ապրած կենա, էստից քսան տարի հ՚առաջ Ասլան թաղավորի աղջիկն օր մե Թափա-դյողմ փախցուց տարավ, մի՞տրդ է։

Թաղավորը կրսե.— Հա։

— Էս տղեն գնացեր է, էդ Թափա-դյողին սըպաներ է, աղջիկը ասեր էկեր է։ Դուք տասվէրկու թագավորով չը կրցաք էն Թափա-դյողին հաղթե, էնիկ մեննակ հաղթեր է։ Հիմի դուք էդոր ի՞նչ կըրնաք էնե։

Թաղավորն օր դրրացեն էդ խոսքը դիմանա, կուրախնա կըսե.

— Օր էդպես է, տասնըհինգ դավի բեռ չէ՝ եռսուն բեռ օսկի կուտամ, իլլաքի օր աղջիկը մեր բարեկամի աղջիկն է։

Բերե, տղին եռսուն դավի բեռ օսկի կուտա, խապար կէնե Ասլան թաղավորին. «Աչքդ լուս, արի օր Թափա-դյոզի փախցըրած աղջիկդ էկեր է, իմ հողիս մեջը»։

Ասլան թաղավորը էդ խապարը իմանալուն պես՝ գելնե ու գուրա, աղջկան կը տեսնի, էդ տղին կը տեսնի, դիմանա որ Թափա-դյոզին էլ սատկեցուցեր է, կուրախնա, կառնե աղջկան ու տղին, կէրթա իրան քաղաքը։

Խապար կէնե, էդ տղի հորն էլ կանչե կը։ Բերե աղջիկը կուտա էդ տղին, կէնե իրան փեսա։

Օխտը ղոր, օխտը գիշեր հարսնիք կէնե, էդոնց կը պսակե։ Փեսի հորն էլ կէնե իրան խաղնատար, թագավորութենն էլ կուտա փեսին։

Իրանք կը հասնին իրանց մուրազին, դուք էլ հասնիք ձեր մուրադին։

Հ՚երկնքեն հ՚իրեք խնձոր ընկավ։ Մեկը՝ ըսողին, մեկը՝ լսողին, մեկն էլ լավ անկաջ էնողին։